



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелік».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլեֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

խառնանիւր տողաւորով 10 կոպէկ.

Տէլեֆոն № 258.

ՄԱՐԻՆ ԻՎԱՆՈՎ ՆԱ ԲԵԳԹԱՐԵԳԵԱՆԻ

(Մանկ Զինապետ)

Վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ նոյնամբերի 20-ին.

Հոգեհանգիստներ ամեն օր երեկոյան 7 ժամին հանգուցեալի ընկալանաւ, Սեր-
գիւնի վարդապետ փոքր, սեփական տուն: Մարմինը յուղարկուեց թիւ 4-ին կիւրակի,
նոյնամբերի 24-ին, առաւօտեան 10 ժամին, դէպի Վանքի մայր եկեղեցին, իսկ այնտե-
ղից Սոջիկանքի գերեզմանատունը:

2—4

ԲՈՎԱՆԻՄԱՆՈՒԹԻՒՆ

Գրքերի միջոցով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Թաթարները գաղթում են Ռուսիա. Վիճելի
խնդիր. Նախակ Կրասնովոդսկից. Նախակ ինք-
նագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԱՆԱՍՏԱՐԱԿԱՆ.
Կանանց հարցը.

ԳՐԲԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Մենք լսում ենք յաճախ գանգաւորներ,
որ գրքերի պահանջ է զգացվում շատ
տեղերում, իսկ նոր հրատարակութիւններ
երևում են շատ սահմանափակ թւով:
Հասարակութեան մէջ պահանջ կայ կար-
գալու նրա կենցաղավարութեան վերաբե-
րեալ գրքեր, ընթերցանութեան միջոցով
ծանօթանալու իր երկրի եւ նրա ժողո-
վորների հետ, ձեռք բերելու առողջա-
պահական եւ արհեստագիտական հմտու-
թիւններ, հետեւելու գրականութեան զար-
գացմանը թէ մեզանում եւ թէ ուրիշ տե-
ղերում, սակայն անցնում են օրեր եւ ա-
միսներ եւ մեր գրադատական շուկան
շատ քիչ է հարստանում այնպիսի աշխա-
տութիւններով, որոնք բաւարարութիւն
տալին ժողովրդի ընթերցասիրական պա-
հանջին:

Ճիշդ է, մամուլը մեզանում վերցրել է
իր վրա նաեւ գրքերի գերը եւ տալիս է
բազմաթիւ յօդուածներ զանազան կեն-
սական հարցերի մասին, սակայն նա չէ
կարող շատ մեծ տեղ յատկացնել ոչ ա-
ռողջապահական, ոչ արհեստագիտական,
ոչ վրայական եւ զգալարուեցողական գր-
ւածքներին: Մամուլը կարող է միայն հա-
մառու եւ ամբողջ տեսութիւններ գետե-
նալ:

ԲԱՆԱՍՏԱՐԱԿԱՆ ԿԱՆ

ԿԱՆԱՆԵ ՀԱՐՑԸ

Մի ֆանտաստիկական պատմութեան հեղի-
նակ, որի երեւակայութիւնը թուի է գործում
մեր ժամանակից հազար տարի յետոյ, տեսնում
է բոլոր այժմեան հարցերը լուծված, բայց
մէկից—կանանց հարցից, որ եւ 50-րդ դարում
մնում է բաց... Ժամանակակից հասարակու-
թեան մէջ երեւան լավում է այդպիսի ծայրայեղ
յոռետեսութիւն այդ հարցի վերաբերմամբ,
բայց թէ որքան հիմնաւոր է այդ տրամադրու-
թիւնը, դա նոյնպէս հարց է... Դժուար է, ի
հարկէ, գուշակել թէ երբ վերջապէս «կանանց
հարցը» կը դադարի հարց լինելուց եւ թէ ինչ
կերպարանք կընդունէ նա, միայն անկասկած է
որ այդ հարցը ընած է, որ նա առաջ է շարժ-
վում, որ նա նոյնպէս ենթարկված է էվոլյու-
ցիայի օրէնքներին, որ նա շատ զանազան եւ
անկասկածելի կերպով ուղեւորում է իր պատմա-
ւոր տեղը քաղաքակրթութեան կենսի մէջ.
Եւ նրան առաջ մղողը, կենդանութիւն
առաջը ֆեմինիստական կոնցրեցիան է, այլ
ինքը կանանց իր անողորմ պահանջներով.
Գինը յարմարում է այդ պահանջներին, նա
խառնաւորում է ժամանակի սոցիալական, անտե-

ղի, նա կարող է միայն փոքրիկ վէպեր
եւ պատկերներ տալ, իսկ մնացածը պէտք
է կատարվի գրչի միջոցով:
Ընթերցանութեան գրքեր տալու հոգը
այնպիսի հոգեւորից չէ, որի մասին մաս-
նաւոր նախաձեռնութիւնը անընդունակ
լինի դեր կատարել: Գրադատականութիւնը
թէ եւ դեռ քիչ է զարգացած մեզանում,
բայց եւ այնպէս անուսալի վիճակի մէջ
չէ: Վերջին տարիներում մի քանի գրա-
վաճառական ձեռնարկութիւններ աճողու-
թեամբ առաջ են տանում իրանց գոր-
ծերը, եւ եթէ նրանք աւելի շատ հրատա-
րակութիւններ ունենային իրանց ձեռքին,
աւելի մեծ չափով հնարաւորութիւն կու-
նենային բաւարարութիւն տալու գրքերի
պահանջին: Մասնաւոր նախաձեռնութիւ-
նը այդպիսով միջոց ունի մի բարի գործ
կատարելու եւ տալու ժողովրդի ձեռքը
օգտաւէտ ընթերցանութեան գրքերի ամ-
բողջ շարքեր:

Մամուլը իր կողմից կը շարունակէ,
անկասկած, մասամբ փոխարինել գրքերի
գործը, բայց ժամանակն է, որ ազգայնա-
կութեան ձեռքը տրվէին այն բոլոր գործ-
քերը, որոնք անհրաժեշտ են նրա մաս-
նաւոր եւ բարոյական պահանջներին լրու-
թիւն տալու: Գիրքը դեր ունի կատարե-
լու ազգայնականութեան մէջ, մի դեր, որ
այնքան բարերար հետեւանքներ է տուել
կրթված երկիրներում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԱԹԱՐԱՆԵՐԻ ԳԱՆՈՒԹԻՒՆ ԹԻՒՐԻՒՄ

Վերջին ժամանակները Ղրիմի թուրք կամ
թաթար ազգաբնակիւնները սկսել է մեծ խմ-
բայն:

Երկրի պայմաններին եւ այդպիսով առաջ է
տանում իր դատը—կանանց հարցը: Այս է մեզ
առում իրականութիւնը, այդ ենք մենք տես-
նում, երբ համեմատում ենք մօտիկ անցեալը
ներկայի հետ, երբ համեմատում ենք արեւել-
եան կնոջ դրութիւնը աւելի քաղաքակրթութեան
գերի կնոջ դրութեան հետ: Մինչդեռ արեւել-
քում—մեր հարեւան Պարսկաստանում, թիւր-
քայում—կիւրդ տակաւին շարունակում է աղա-
մարդու ստորուկը լինել, մինչդեռ մեզանում—
հայերի մէջ—կիւրդ դեռ զուրկ է սեփական
«ես»-ից, աւելի առաջադէմ, աւելի քաղաքա-
կրթ երկիրներում նա արդէն կանգնած է
աղամարդուն հաւասարվելու ճանապարհի վրա:
Այսպէս, օրինակ, Աւստրալիայի գաղութներում,
Նոր Զելանդիայում, արդէն ութ—ինը տարի է
որ կիւրդ աղամարդու հետ հաւասար ընտրող-
կան իրաւունքներ է վայելում եւ իրեն քաղա-
քական—հասարակական մարմին, ներկայացնում
է առաջադէմ տարր: Նոր Զելանդիայի հրաշալի
բանաստեղծներ օրէնսդրութիւնը, որի նախնի
չը կայ ոչ Եւրոպայում եւ ոչ Ամերիկայում,
նշանաւոր չափով ստեղծված է կին ընտրողների
չնորհու: Յայտնի է նոյնպէս, որ հիւսիսային
Ամերիկայի մի քանի նահանգներում կիւրդ նոյն-
պէս քաղաքական եւ քաղաքացիական իրա-
ւունքներ ունի, ճանաչված է իրեն ազատ
մարդ, որի առաջ բաց է գործելու ասպարէզը:
Ամերիկայի համալսարանը կանանց սկսեց ըն-

բերով գաղթել թիւրքիս Գաղթականական այդ
շարժումը գրաւել է արդէն ռուսաց մամուլի
ուշագրութիւնը եւ նրա լուրջ օրգանները, ինչ-
պէս «Русскія Вѣдомости», «С.-Петербургскія
Вѣдомости», իրանց առաջնորդող յօդուածնե-
րով աշխատում են պարզել այդ շարժման էա-
կան պատճառները:

Դեռ 1860—63 թուրքին Ղրիմից թիւրքիս
գաղթեց 62,000 հոգի արական սեռից, ուրեմն
մօտ 120,000 ազգաբնակիւններ, հաշուելով եւ
իրանց հետ տարած կանանց, եւ այդ գաղթա-
կանութիւնը նշանաւոր կերպով փոխեց Ղրիմի
տեսքը: Շատ դատարկ հողեր մնացին եւ տե-
ղական կառավարութեան ջանքերը փոխարինել
թաթարներին ուրիշ տարրերով անպիտան
ցան: Այժմ—առում է Մօսկվայի լրագիրը—այդ-
քան մեծ թուով գաղթումն չէ կարող լինել,
որովհետեւ Ղրիմում մնացել է այժմ նախկին
թուրք ազգաբնակիւնների միայն կէսը, բայց
այնու ամենայնիւ գաղթականական շարժումը,
որքան էլ փոքր ծաւալով լինի, հետաքրքրու-
թիւն է ներկայացնում մանաւանդ այն պատ-
ճառով, որ կառավարութեան ընած քաղաքա-
կանութիւնն եւս դեռ որոշակի չէ պարզված:
Լրագրական լուրերին նայելով, տեղական իշ-
խանութիւնները երբեմն համոզում են թուր-
քերին մնալ, իսկ երբեմն յայտնում են նրանց,
որ վերադարձողները այլ եւս չը պէտք է ըն-
դունվեն:

Այդ գաղթականութեան պատճառները բա-
ցատրելու կարող են օգնել նահանգական վար-
չութեան հաւաքած վիճակագրական տեղեկու-
թիւնները: Դեռ 1884-ին Ղրիմի թուրք ազ-
գաբնակիւնները թիւը 144,000 էր երկու սե-
ռից եւս, իսկ միայն արական սեռից—77,500
հոգի: Այս վերջին թուից 65,000 հոգի գիւղա-
ցիներ էին, մօտ 12,000 մէլչաններ եւ մօտ
1000 հոգի մուրադներ, վաճառականներ: Ինչ
վերաբերում է հողին, 28,812 հոգի ոչ մի հող
չուէին, մնացածները հողը վարձու էին վերց-
նում կամ ապրում իրանց սեպական հողի վրա:
Օրինական հողաբաժիններ ունէին միայն 786
հոգի: Այդ թուրքը ցոյց են տալիս, որ Ղրիմի
թուրք գիւղական ազգաբնակիւնների վիճակը
սատուիկ տարբերվում է մեր երկրի ազգաբնա-
կութեան վիճակից, որովհետեւ օրինական հո-
ղաբաժին կամ «նազլ» ունի ազգաբնակիւնները
միայն մի առկուշ, իսկ մնացածները հողատի-
րութեան միայն երկու ձեւ ունեն, կամ սեպ-
ականութիւն, որ մնացած է խաների ժամա-
նակից կամ կապալ, այնպէս որ իսկապէս ա-
պահով կարելի է համարել սեպականացեալների

վիճակը, ուրեմն ամբողջ գիւղական ազգաբնա-
կութիւն մօտ կէսի վիճակը:

Միւս կողմից յայտնվում է, որ հողերի մի
մեծ քանակութիւն պատկանում է մուրադնե-
րին, իսկ մօտ 40,000 դեսեստին վաւարաֆային
են, այսինքն պատկանում են մզկիթներին եւ
մէլչաններին, բայց այդ հողերով գիւղական
ժողովուրդը օգտվել չէ կարողանում:

Ուրեմն, հողագործը տարրը Ղրիմի թաթար-
ներին մէջ շատ մեծ է եւ հետզհետէ աճում է,
որովհետեւ մուրադները զանազան միջոցներով
խլում են պարզամիտ թաթար գիւղացիներից
նրանց ունեցած հողերը: Նոյն իսկ եթէ վա-
րձաֆային 40,000 դեսեստին հողը կտրուվա-
րութիւնը կարողանար դնել գիւղացիների
տրամադրութեան տակ, դարձեալ գրանով մեծ
օգնութիւն արած չէր լինի, որովհետեւ 40,000
դեսեստին հողը կարող է հաշիւ կերակրել
5—6 հազար աղամարդ կամ 10—12 հազար
հոգի երկու սեռից: Ի՞նչ պէտք է անեն մնա-
ցած հողագործիկները, անհարպցած նրանք զի-
մում են կամ քաղաքները, կամ մտածում են
գաղթել թիւրքիս, ուր նրանց մեծամեծ խոռ-
տուկներով են հրապարակում:

Եւ սակայն, Ղրիմի թաթարների կենսին
մօտ ծանօթ անձինք վկայում են, որ թաթար
գիւղացիները աշխատում են, խնայող, ժուժկալ
ու պէտքական տարր են ներկայացնում եւ
երկրի մշակութեան համար պիտանի ոյժեր են:
Այդ պատճառով, տեղական կառավարութիւնը
լուրջ ուշադրութիւն է դարձնել առ այժմ վա-
րձաֆային խնդրի լուծման վրա, որ մինչեւ
այժմ, 1884-ից ի վեր, անլուծելի է մնացել:
Այդ հարցը դժուար լուծելի է դարձել այն
պատճառով, որ աղքատիկ մահմադական հոգե-
ւորականութիւնը խոչընդոտներ է յարուցա-
նում, որովհետեւ նրան ամենաին ձեռնառու չէ
զրկվել այդ հողերի կառավարութեան իրա-
ւունքից:

Վ Ի Ճ Ե Լ Ի Խ Ն Դ Ի Ր

Տարի ու կէս յետոյ բոլորում է մեր այրու-
բների գիւտի հազար հինգարեւրամեակը Պ.
Սոս. Մախաթեան, յիշեցնելով «Մշակի» ընթեր-
ցողին այդ պատմական երեւոյթի մեծ նշանա-
կութիւնը, յայտարարում է, որ ինքը մտադի-
ր է մի խոշոր գրական գործ ձեռնարկելու, այն
է ցանկանում է այդ առիթով հրապարակել մեր
պատմագիրների մի ժողովածու «Պատմագիրը
հայոց» վերնագրով:

Այդ ժողովածուն քաղաքացի է կր ինի հինգ
թիւնը մեզ աւելի շատ բան է առում, աւելի
է ուրախացնում, քան նրա ձեռք բերած մի
քանի իրաւաբանական իրաւունքները: Մենք հա-
ւատում ենք, որ երբ կիւրդ իբրեւ անհատ տղա-
մարդուն հաւասարվելու չափ կտալու, նա
բնականաբար ձեռք կը բերէ եւ աղամարդուն
համաւասար ընդհանուր մարդկային, քաղաքա-
ցիական, իրաւաբանական իրաւունքներ: Բայց
որքան էլ գեղեցիկ ու ցանկալի լինի այդ հե-
ռանկալը, այնուամենայնիւ այժմ խօսել, մտա-
ծել դրա մասին առնուազն վաղաժամ կը լինէր:
Այժմ մեր հետադարձողը կնոջ ներկայ դրու-
թիւնն է, նրա այժմեան մտաւոր ու հոգեկան
զարգացումն է—ընդհանրապէս կնոջ եւ մաս-
նաւորապէս հայ կնոջ:

Մօտիկ ծանօթ լինելով Ռուսաստանի թէ
գիւղական կենսին եւ ինտելիգենտ դասակարգի
հետ, մենք կուզենայինք խօսել նախ այդ երկու
դասակարգերին պատկանող ուսուցչական մա-
սին, նրանց անհատական առաջնորդման
նրանց ընտանեկան եւ հասարակական դրու-
թեան մասին:

Ռուս գեղղիկներին, մինչեւ մարդու գնալը թէ
ընտանիքում եւ թէ գիւղական հասարակու-
թեան մէջ, այնքան ազատ է, այնքան ինքնու-
նալ է, որպիսի եւ նրա խափահաս—չամուսնացած
բաւարարութիւն է տալիս այն չափով, ինչ չա-
փով անհատական եղբայրը: Նա ունի իր ցանկութիւնները, որոնց
բաւարարութիւն է տալիս այն չափով, ինչ չա-
փով եւ նրա երկտասարդ եղբայրը: Որպէս զի

մեծագիր հասարակական և կամայական յիշուհի պատմագիր, առաջին հատորը լոյս կը տեսնէ 1904 թւի ամսաբ, Մետրոպ Մաշթոցի տօնին, իսկ մնացած հատորները լոյս կը տեսնեն հետագիւնէ՝ զուգէ մի տասն ամսովայ ընթացքում:

9. Ահարոնեան, համակերպող պ. Մալխասեանցի մաքին—որ եւ է գրական գործով յաւերժացնել Մետրոպ Մաշթոցի յիշատակը—միտնգամայն աւելորդ եւ տարածում չտալով իրեն է համարում նրա այդ ձեռնարկութիւնը եւ մասնաւոր չէ անուի, թէ կան դրանց աւելի անպարկեշտ կարծիքներ չտողովորդը, առում է պ. Ահարոնեան, ընթերցանութեան համար բաւարար եւ համապատասխան գրքեր չունի, եղածները քիչ են կամ անմասնելի ընթերցող դասի մեծամասնութեանը... որովհետեւ էժան հրատարակութիւններ չը կան:

Այն այդ մասին, առում է պ. Ահարոնեան, պէտք է մտածէ Մ. Մաշթոցի գիւտը յաւերժացնել ցանկացող հայ բանասէրը, ժողովրդի կրթութեան մասին մտածողը:

Արդ ինչ պէտք է ձեռնարկել այս դարեղաբձի բարեփոխ, որ ամենից աւելի օգտակար լինի ժողովրդին, ահա մի խնդիր, որի վրա արժէ կանգ առնել:

Հայոց տառերի գիւտը մի այնպիսի խոշոր երեւոյթ է, որի նշանակութիւնը դուրս է գալիս ազգայնական շրջանից եւ համաշխարհային նշանակութիւն է ստանում: Եթէ մեր տառերի գիւտը մեզ տուեց հոգեւոր անկախութիւն (ազգային ըրիտօնէական անկախ եկեղեցի) եւ մասուր ինքնուրոյնութիւն (մայրենի լեզուով մի հարուստ մասնակցութիւն), դրանով մի մեծ գործ էլ կատարվեց ըրիտօնէական քաղաքակրթութեան համար:

Հայոց տառերի գիւտի շնորհիւ այն պատմական երկրներ, ուր մինչեւ այսօր էլ ապրում է հայ ազգը, Փոքր Ասիան, մինչեւ այսօր էլ ընդունակ է մնալով ըրիտօնէական, այսինքն եւրոպական քաղաքակրթութիւնը իւրացնելու, եւ համարեա մի դար է, որ փոքր-ափական ըրիտօնէական հայցում է այդ կրօնակից Եւրոպայից:

Ինչպիսի մարտիրոսութիւն, ինչպիսի վեհ գործ, ինչպիսի հերոսութիւն է այդ մի ոգու յաղթանակներ, որին չը կարողացաւ ընկնել Թուրքիոյ անգամ աւելի մեծ ֆիդիկական ոյժ եւ այն էլ տառնակի դարերի ընթացքում: Ինչքան էլ իրականութիւնը մտայ լինի մեր աչքերում, հաւատում ենք, որ վաղ թէ ու Փոքր-Ասիան կը մասնակցէ եւրոպական քաղաքակրթութեան եւ իսլամը չի կարողանայ ընկնել այդ ոգին, այդ ձգտումը: Դրանով Փոքր-Ասիան մեծ մասամբ պարտական է հայոց տառերի գիւտին, որի շնորհիւ ամրապնդվեց ըրիտօնէականութիւնը եւ նրա հետ միշտ ընթացող մասուր զարգացումը: Այդ անսակեղից մեր դարեղաբձը համարժեքութեան անսխալութիւն պիտի լինի Մենք ոչ միայն պարտուում, այլ եւ ձեռնհաս ենք պատուաւոր կերպով ցոյց տալու ըրիտօնէական աշխարհին մեր այդ պատմական նշանաւոր գործը: Մենք ունենք բազմաթիւ անձինք, ցրված զանազան երկրներում, որոնք ուրա-

խութեամբ կը նուիրեն իրանց գրիչն ու խօսքը այդ նպատակին: Հարկաւոր է միայն խօսակցել եւ խորհրդակցել, հարկաւոր է միայն լիովնել, միաժամանակ գործել ոչ միայն թիֆլիսում, այլ եւ Օսկովայում եւ Պետերբուրգում, Պոլսում եւ Ռուսիայում, Վենետիկում եւ Վիեննայում եւ այլն:

Գալով մեր ներքին նպատակներին, այստեղ մենք պէտք է կանգ առնենք պ. Ահարոնեանի յայտնած մաքին վրա:

Մեր դարը ժողովրդի շահերի, ժողովրդի ձգտումի դար է, այդ ձգտումով, այդ հոսանքով զեկվարովում է ամեն ինչ: Որքան էլ պատուաւոր լինի անհատի գործունէութիւնը, անգամ հերոսութիւնը, եթէ վերջի վերջոյ նրա անուից չէ գնում ժողովրդը, մեծ հետեւանք չէ կարող առաջ գալ անհատի գործունէութիւնից: Բայց երբ շարժվեց ժողովրդը, նրա այդ շարժումից գոյանում է հոսանք, զարգացման նոր դարաշրջան: Ուստի ամենից առաջ մտածենք Մետրոպ Մաշթոցի յիշատակին արժանի մի բան անելու մասին ժողովրդի համար, մատչելի անելը նրան մեր մասուր կրթութեան լուսաւոր այն արտադրութիւնները, մատչելի դնելով եւ մատչելի լեզուով գիրք տանք մեր մասնաւոր ժողովրդի ձեռքը, ծանօթացնենք նրան մեր հրեւին ու նորին, ծանօթացնենք նրան, թէ ով է եղել Մետրոպ Մաշթոց եւ ինչ է արել:

Այստեղ եւս պէտք է խորհել եւ գործել հաւաքական ոյժերով եւ հաւաքական միջոցներով:

Սրանից դուրս մնում է եւ այն, ինչ որ ձեռնարկում է պ. Մալխասեան, այն է մեր կրթութեան հատարակութեան, նոյն իսկ մասնաւորապէս հայադիտութիւնով պարագող բանասէրների ձեռքը տալ մեր գլխաւոր պատմագիրների համարմատելի ժողովածուն:

Միայն մի բան եւ կը ցանկայի բարեփոխված տեսակ պ. Մալխասեանի ձեռնարկութեան մէջ, ու կարծիքով, ամեն մի մասնակցող պէտք է նուիրել ոչ միայն ռուսիայում եւ առաջաբան, որի մէջ հաղորդվեն հակիրճ, ստույգ տեղեկութիւններ հեղինակի անձի եւ պատմագրութեան գրվելու ժամանակի մասին, ինչպէս առում է պ. Մալխասեան, այլ խուսափելով դուռ մասնակցութեան միակողմանիութիւնից, պէտք է այդ առաջաբաններում կարելոյն չափ լին բացատրել ամեն մի հեղինակի գրական գործունէութիւնը, պատմել նրա կենսագրութիւնը եւ բացատրել նրա դարի գրական հոսանքները: Միայն այդպիսի հրատարակութիւն կարող է նպաստել մասնակցողների թէ տարածման եւ թէ ընթերցանութեան ու ուսումնասիրութեան: Եւ կարծիքով եւս, որ այս վերջին գործն էլ կարող է ունենալ իր համարողներին եւ վառական ընթերցող: Այսպիսի հրատարակութիւն կարող չէ տարածվել անշուշտ միմիայն հարուստ եւ ունեւոր դասակարգի մէջ, եւ հազիւ թէ ժողովրդը սրա մէջ մասն ունենայ: Կանխապէս այս պէտք է ի նկատման առնել: Կարող ենք համարել լինել, որ սա ամենեւին չի փոխարինի առաջին նպատակին, չի էլ խանգարի նրան:

Կարող լինի նրա ինքնուրոյնութեան չափը, պէտք է ասել, որ հայ գիւտարի երեւաւորող աւելի է ձնված թէ ընտանիքում եւ թէ գիւտական հատարակութեան մէջ, աւելի է նեղված ծնողների եւ հատարակական կարծիքից, քան թէ առաջ գիւտական աղբիւր: Ռուս գեղղկուհին ազատարգու հետ համահաւասար կերպով ըմբռնում—աշխատում է. նա մասնակցում է բոլոր թէ անային եւ թէ չանային աշխատանքներին, բացի մի քանի կնոջ ոյժերից վեր գործերից. եւ պէտք է ասել, որ ազատարգուն հաւատար կերպով աշխատելով, նա ազատարգու հետ համարեա հաւատար իրաւունքներ է վայելում, բացի ի հարկէ այն դէպքերից, ուր իշխող օրէնքն է սահմանափակում նրա իրաւունքները:

Պարզ է, որ աշխատանքի հաւատարութիւնը եւ միատեսակութիւնը նպատակում է նրանց իրաւունքների հաւատարկելուն. իսկ միւս կողմից առաջ կանանց բարձրի ազատութիւնը պէտք է բացատրել եւ նրանց ազգային յատկութիւններով ու կարգերով, ուստի ազատարգու մէջ չը կան բանալիք այն հակումները, ինչպէս որ ասիացու մէջ, ուստի եւ նրանց կանայք աւելի ազատ եւ իրաւասէր են: Եւ ընդհանրապէս առաջ կանանց, ուստի միջոցառում աւելի ազատ է չնչվում, քան օրինակ մեզանում: Վերադառնալով առաջ գեղղկուհու աշխատանքին, պէտք է աւելացնել, որ բացի վերո-յիշելով պարագովունքներից նա օրավարձի է գնում մասնակց մասնաւոր կամ պետական

Ուստի,—եթէ պ. Մալխասեան այդ գործը ձեռնարկում է իրեն իրան համար մի նուիրակն նպատակ իր հատարակական գործունէութեան ասպարէզում, եւ կարծում եւ, որ ոչ մի անհրաժեշտ բան չէ ձեռնարկում նա եւ ոչ ոքին էլ չէ խանգարում նոյն շարժաւորով այլ հանրագուս հրատարակութիւններ ձեռնարկելու:

Կար. Ստոլոբանց

Բագու

ՆԱՄԱԿ ԿՐԱՍՆՕՎՈՒՄԻՅԻՑ

Նոյեմբերի 17-ին

Նոյեմբերի 10-ին տեղի ունեցաւ այստեղ հայոց Ե. Կրիզոր Լուսաւորիչ եկեղեցու հիմնարկութեան օծման հանդէսը: Պատարագից յետոյ, եկեղեցական թափփրը, իր գլուխ ունենալով մեր թեմի առաջնորդ Արքեպիսկոպոսը արքեպիսկոպոսին եւ ուղեկցութեամբ տաճարակց կնքահայրերի, որոնք իրանց գրկերում տանում էին առաքելային եւ աւետարանիչներ անունը կրող քահանայ, առաջ շարժվեց դէպի եկեղեցու հիմնարկութեան տեղը, ուր հանդիսատեսների խումբ բազմութիւնը, թէ հայերից եւ թէ օտարաւոր ինչպէս իմացի մէջ եւ տանեկան կնքահայրերից իւրաքանչիւրին իրանց տեղերում դառաւորելով: Արքեպիսկոպոսը արքեպիսկոպոսը օկանց կատարել օծման կարգը: Կնքահայրերի թիւում գտնվում էին եւ չորս օտարազգիներ—մեր բաւառապետ գնդապետ Վալդիսկի, տեղական փաշայ գնդապետ Դուրաճէ, նրա օգնականը եւ տեղական զինուորական երկրաչափ Պարսմանով, որին յանձնված է եւ եկեղեցու շինութեան գործը:

Ժամը 2-ին տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշ քաղաքային ժողովարանում, ուր, ի միջի այլ հրաւիրածների, ներկայ էին նաեւ քաղաքի կառավարչական եւ հատարակական հաստատութիւնների ներկայացուցիչները: Առաջին կենսաւ բաժակը առաջարկեց Արքեպիսկոպոսը արքեպիսկոպոսը Նորին Մեծութեան Թագաւոր Կայսրի եւ Կայսերական Օգոստափառ Շնորհարար Եւրոպական խմբի շնորհակցութեանը: Որոտաճայն ուսան թնդացրեց դաշինք, իսկ զինուորական երաժշտութիւնը կատարելու համար ազգային օրհներգը: Երկրորդ բաժակը առաջարկեց գաւառապետի կողմից Վեհափառ Կաթողիկոսի կենաց համար, որին հետեւեց նոյն որոտաճայն ուսան եւ երաժշտական խմբի Վեր հայրենիք—ը: Այնուհետեւ տեղի ունեցան կենաց բաժակներ այն նշանակաւոր երախտաւորների համար, որոնք այդ գործի մէջ դեր են խաղացել, ինչպէս զինուորական միւստերի, երկրի կառավարչապետի, մեր թեմական առաջնորդի, նահանգապետի եւ միւս ներկայ եղողների համար: Մի քանի նշանաւոր կենացների ժամանակ խմբագրվեցին եւ ուղարկվեցին հեռագրեր, որոնց պատասխանները աւելորդ չեն համարում գնել այստեղ:

Վեհափառ Կաթողիկոսի պատմասանը առաջնորդին. «Ուղարկում ենք մեր հովուապետա-

ւոր ապրող կինը կարող է բոլորովին անկախ, ինքուրոյն լինել եւ վերջապէս որ իր աշխատանքով ապրելով՝ նա ստիպված չի լինի առաջին պատահածին մարդու գնալ. բայց գլխաւորապէս ի հարկէ այդ ձգտումը պէտք է բացատրել անտեսական եւ սօցիալական պայմաններով: Գնալի աւելի է զարգանում կենանը: Դանի աւելի են լայնանում կուլտուրական մարդու պահանջները եւ քանի աւելի են դժուարանում ու բարդվում անտեսական պայմանները, այնքան աւելի է մեծանում սեփական աշխատանքով ապրող կանանց թիւը: Առաջ երբ բոլոր աղջիկները մարդու էին գնում, այն էլ 16—18 տարեկան հասակում, սեփական աշխատանքով ապրելու կարիք էլ չը կար, բայց հետեւեցին ժողովրդի ծառայելու գործին: Մեղ ծանօթ են դէպքեր, երբ դպրոցի շինութեան մէջ հար չէ եղել տեղաւորել սովորել ցանկաւ: Բայց երբ երեխաներին եւ վարժուհին, դուրս մնացանքին մերժելու փոխարէն, յանձն է առնում բոլոր սովորել ցանկացող երեխաները: Բայց մինչեւ կէս օր, իսկ միւս մեծ հետ օրից յետոյ. եւ ի նկատի ունեցեք, որ այդ անում է առանց որ եւ աւելորդ վարձատրութեան: Բացի այդ իր բոլոր ազատ ժամերը նուիրում է նոյն ժողովրդին, օովորեցնում է նրան ջոկել չարն ու բարին, պարտաւորութիւնը ընթերցանութեանը, գնում է մագալանաւորութեանը, սարքում է իր հաշուով գիւտական երեխաների համար տոնածառ եւ այլն:

Ինչպէս տեսնում էք, ընթերցող, չէ կարելի չը խոնարհվել այդպիսի անձնատեղութեան առաջ: Ռուս ինտելիգենտ կնոջ գաղափարական կրթութիւնը, հայրենասիրութեան մասին խոսելով՝ չենք կարող չը գիտենք եւ այն դերը, որ կատարում է նա ժողովրդական որ եւ է աղէտն՝ համաճարակի, օովի, հրդեհի ժամանակ. այդտեղ էլ նրա գաղափարական ոգեւորութիւնը հասնում է անձնատեղութեան:

(Կը շարունակվի)

կան օրհնութիւնը հրատարակելի հայ հատարակութեան. թող պահպանէ Ամենաբարձրաւոր Լուսաւորչի անհանգիւն լոյսը հայ ժողովրդեան մէջ: Չինուորական միւստերի պատասխանը քաղաքի զինուորական հիւանդանոցի աւագ բժիշկ պ. Տէր-Միքայէլեանցին. «Հեղեպէս ուսարանում եւ արդուութիւն ս. տաճարի շինութեան եւ շնորհակալ եմ հրատարակելու բոլոր հայերից արտայայտած զգացմունքների համար: Գնեք առաջիկայումս Կուրպապետին»:

Թուրքաստանի ընդհանուր նահանգապետի պատասխանը պ. Տէր-Միքայէլեանցին. «Ողջութեամբ եմ ձեռ յայտնել հրատարակութեան հայ հատարակութեանը իմ շնորհակալութիւնը սիրելի ողջոյնի համար: Գնեք առաջիկայումս իմա նօվ»:

Նահանգապետի պատասխանը պ. Տէր-Միքայէլեանցին. «Շնորհաւորում եմ հայ համայնքը այդ աստիճան փառաւոր անցքի աւիթով: Դանկանում եմ արդուով վախճան այդ սուրբ գործին: Սուրբօրհն»:

Ժամը 4/2-ին վերջացաւ ճաշը: Հետեւեալ օրը, նոյեմբերի 11-ին, երեկոյան ժամը 5-ին, Արքեպիսկոպոսը արքեպիսկոպոսը ճանապարհվեց Բագուի վրայով դէպի Վաղարշ վկաղ, ուր եւ ձմեռելու է:

Այն, ինչ որ ցանկանում էր հրատարակելի հայ հատարակութիւնը տարիներից ի վեր, այսօր իրականացած է:

Գ.

ՆԱՄԱԿ ԿՐԱՍՆՕՎՈՒՄԻՅԻՑ

Կարս, նոյեմբերի 12-ին

Խնդրեմ թող տաք ինձ հատարակութեան առաջ հանել հետեւեալ դէպքը:

Սեւ ծովի ափին գտնվող գաղթական մի հայ գիւղի համայնքը տարիներից ի վեր իր միջոցներով մի աղքատիկ դպրոց է պահում եւ, ինչպէս առում են, իր բերնի պատուով կրթում է, որպէս զի կարողանայ այնքան փող հաւաքել, որ դպրոցի գոյութիւնը պահպանէ: Երկու տարու չափ նոյն գիւղացիների երեխաների կրթութեան գործը վրաս առնելու բարձունքն էլ եւս. բայց ներկայ ուսումնական տարվանից անկախ պատճառներով չը կարողացաւ յիշել գիւղում վարել ուսուցչական աշատունը: Դիւղացիներն էլ անդադար դիմում էին ինձ նամակով, թէ այստեղ եւ թէ թիֆլիսում, որ կրկին տառնանում ուսուցչական պաշտօնը իրանց գիւղում, հակառակ դէպքում գոնէ մի ուրիշն ուղարկէին:

Ես դիմեցի ընդունված միջոցին, այն է՝ յայտարարեցի թերթերում, թէ հարկաւոր է մի ուսուցիչ: Սեւ ծովի ափին գտնվող գիւղի համար: Հոկտեմբերի մէկին լոյս տեսաւ առաջին յայտարարութիւնը եւ, պէտք է ասած, այդ օրվանից սկսեցին կարկանդակէս տեղալ նամակներ զանազան տեղերից: Մենակացողների մէջ շատ կային երկար տարիներ մանկավարժական ապագայում գործող ուսուցիչներ, միջոցների սղութեան պատճառով բարձրագոյն կրթութիւնը ընդհատող ուսանողներ, առաջնաւորական դպրոցի աշակերտներ եւ այլն: Բայց դեռ ոչ ոքին չը պատասխանած՝ հոկտեմբերի 4-ին Կարսի ծանօթներէս մինը ներկայացնում է ինձ 1895 թւին ներօրհնած զբաղ-

ւորութեան, փակվել է Ռուսաստանի յետ ընկած գիւղերից մէկում եւ իր բոլոր եւութեամբ նուիրվել ժողովրդին ծառայելու գործին: Մեղ ծանօթ են դէպքեր, երբ դպրոցի շինութեան մէջ հար չէ եղել տեղաւորել սովորել ցանկաւ: Բայց երբ երեխաներին եւ վարժուհին, դուրս մնացանքին մերժելու փոխարէն, յանձն է առնում բոլոր սովորել ցանկացող երեխաները: Բայց մինչեւ կէս օր, իսկ միւս մեծ հետ օրից յետոյ. եւ ի նկատի ունեցեք, որ այդ անում է առանց որ եւ աւելորդ վարձատրութեան: Բացի այդ իր բոլոր ազատ ժամերը նուիրում է նոյն ժողովրդին, օովորեցնում է նրան ջոկել չարն ու բարին, պարտաւորութիւնը ընթերցանութեանը, գնում է մագալանաւորութեանը, սարքում է իր հաշուով գիւտական երեխաների համար տոնածառ եւ այլն:

Ինչպէս տեսնում էք, ընթերցող, չէ կարելի չը խոնարհվել այդպիսի անձնատեղութեան առաջ: Ռուս ինտելիգենտ կնոջ գաղափարական կրթութիւնը, հայրենասիրութեան մասին խոսելով՝ չենք կարող չը գիտենք եւ այն դերը, որ կատարում է նա ժողովրդական որ եւ է աղէտն՝ համաճարակի, օովի, հրդեհի ժամանակ. այդտեղ էլ նրա գաղափարական ոգեւորութիւնը հասնում է անձնատեղութեան:

(Կը շարունակվի)

